

Թափեց քաջալերանքով, հայրական յորդորներով ու կազմակերպչական ձեռնարկներով: Ուսումնական խորհուրդի կազմաւորումը, ուսումնական ընդհանուր ծրարի մշակումը եւ զործադրութիւնը, հուսկ Քարէն-Էփրէ ձեռնարանի բացումը իր անդուլ վաստակին պատկանէր եւ: Հապառակ պետական սեղմումներու մեծ աշխատանքով կը յաջողէր, ուրիշ յարանուանութեանց հետ միացած, ձեռք ձգել որոշ առանձնաշնորհներ, ի նպաստ հայ լեզուին ու պատմութեան դասաւանդութեանց:

Մասնաւոր համակրանք ու յարգանք կը տածէր հանդէպ Մխիթարեան Հաստատութեան եւ անոր ժիր մշակներուն. յաճախակի փոխադարձ այցելութիւններով մտերմական սերտ շրջանակ մը կը ստեղծուէր երկուստեք. մտերմութիւն եւ սէր, զոր Զարեհ Սրբազան կը մշակէր նաեւ իր Կաթողիկոսութեան շրջանին, ու փափաք ալ յայտնած էր Եւրոպա կատարելիք իր այցելութեան առթիւ՝ անպատճառ անցնիլ Ս. Ղազարէն: Ուրախութեամբ լսած էինք այդ բոլոր եւ կ'ակնկալէինք այդ երջանիկ հանդիպումին:

Աւագ, այդ երջանիկ օրուան արեւը ալ պիտի չծագի, ու վշտակիր Կաթողիկոսը իր դամբանին խորէն պիտի երազէ Ս. Ղազարի խաղաղ նոճիները:

1952-1956 թափուր կը մնար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահը, Գարեգին Յովսէփեանցի մահէն ի վեր:

Նոր Կաթողիկոսի ընտրութիւնը, ինչպէս ծանօթ է ամէնուն, տեղի ունեցաւ տիւր պարագաներու տակ, 1956ի Փետրուար 20ին. նմանապէս կաթողիկոսական օծումը, նոյն տարուան Սեպտեմբեր 2ին: Եւ այդ տիւր պարագաները չարունակեցին դոյառեւել, հակառակ Կիլիկիան Աթոռին հետզհետէ հաստատ-

ման, բարդաւաճման՝ թիւով եւ կազմակերպութեամբ, ծաւալման՝ նորանոր թեմերու յաւելումով, ներքին կազմակերպութեան՝ զպրեկանքի ծաղկումով եւ ուսումնական ու հոգեւորական վերելքով:

Անշուշտ մեղի չ'իյնար այստեղ իրաւարի դեր կատարել. սակայն չենք կրնար չանտեսել — եւ այս կը յուղէ մեզ — հանդուցեալ Զարեհ Ս. Կաթողիկոսի անյիշատար ու ներողամիտ ընթացքը ամէնուն հանդէպ, զերամեծար յարգանքը էջմիածնի Աթոռին եւ Անոր Գահակալին հանդէպ, եզրայրական կեցումները Պատրիարքական միւս աթոռներուն հանդէպ. եւ ասիկա կրնայ բլլալ վշտակիր Կաթողիկոսին մեծազոյն պարծանքը:

Իսկ համա-եկեղեցական շրջանակներու մէջ անմոռանալի պիտի մնայ իր տաճած մտերմական յարաբերութիւնը եկեղեցական տարրեր եւ նոյնիսկ օտար յարանուանութեանց հետ. ի մասնաւորի, իր օրով, Հայ Կաթողիկէ Նախարարութեան հետ փոխադարձ ցոյց տրուած սիրոյ եւ յարգանքի զեղուն զղացումները:

Տիեզերական Ժողովին զրկուած Դէտը, յատուկ հրաւերի վրայ, կարճէք կու դար նորոգելու դարաւոր աւանդութիւն մը՝ որ զոյութիւն ունեցած է Կիլիկիան Աթոռին եւ Հոռմի Հովուապետին միջեւ, ԺԲ. դարէն ստղին:

Ի՞նչ յոյսեր ու ակնկալութիւններ...:

Ու մինչ յարգանքով կը խոնարհինք Ն. Ս. Օ. Տ. Տ. Զարեհ Ս. Կաթողիկոսի թաւմ հոգակոյտին վրայ, ազօթք մը ունինք սրտապին, որ հետզհետէ յորդին ու ամբողջունին, զօրանան այս մտերմական յարաբերութիւնները, ի պայծառութիւն Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն եւ Հայ Ազգին:

Հ. Ն. Տ. Ն.

ԿԱԹՈՂԻԿԷ ԹՈՒՂԹԵՐՈՒ

ԽՍԵԱԳԻՐ ՄԵԿՆՈՒԹԵՐՆ

(Շար. տես «Բազմալեզու» 1962, ք. 6-8, էջ 125)

Ե.

ՆԱԽԱԳԻՐԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկէ թուղթերու խմբագիր մեկնութեան թարգմանչին, եւ նոյն մեկնութեան Միաբանութեան մատենադարանին զրչագիրներուն վրայ համառօտ ծանօթութիւն տալէ ետք, նախընթաց Գ. եւ Դ հատուածներով, երբ կը բանանք այդ ձեռագիրները, նախ եւ առաջ կը հանդիպինք իւրաքանչիւր առաքելական թուղթի սկիզբը զրուած Նախադրութիւններու, իրր ամփոփում մը թուղթին: Կարծէ քանի մը խօսք անոնց մասին:

Աստուածաշունչի Նախադրութիւնները ժամանակաւ ուսումնասիրած է Հ. Գ. Զարրանայեան¹. Իսկ Կաթողիկէ խմբագիր մեկնութեան Նախադրութիւններու մասին զրած է Բաբէն Սրբազան, զէմ առ զէմ համեմատելով Յակոբ Առաքելի թուղթին Նախադրութիւնը՝ Աստուածաշունչի Զահարական աղագրութեան հետ, նշանակելով տարբերութիւնները²:

Սակայն, Յակոբու թուղթի Նախադրութեան առաջ, մատենադարանի թ. 951 ձեռագիրը, զրուած 1335ին, ունի Յառաջաբան մ'ալ, որ կը պակսի մեր խմբագիր մեկնութեան բոլոր միւս օրինակներուն մէջ. հոն կը խօսի Ա. Կաթողիկէ եօթը թուղթերու զրութեան պատճառին, Բ. Թէ ինչո՞ւ այս թուղթերը Կա-

թողիկէ կոչուած են, եւ Գ. Թէ ինչո՞ւ Յակոբայ թուղթը նախադասուած է: Այս Յառաջաբանը բոլորովին տարբեր է Աստուածաշունչի եօթը թուղթերու սկիզբը հրատարակուած Յառաջաբանէն, ուստի ամբողջութեամբ կը հրատարակեմ ի վերջ զրութեանս:

Ինչպէս Յակոբայ՝ այսպէս եւ Պետրոսի Ա. եւ Բ. թուղթերու Նախադրութիւնները խմաստով կը համաձայնին Աստուածաշունչի Նախադրութիւններուն. յայտնի է որ Մեկնութեան թարգմանչը ուղած է նոր թարգմանութիւն մը տալ, եւ տեղ տեղ աւելի պայծառ է քան Աստուածաշունչի մէջ եղածը:

Իսկ Յովհաննու Ա. թուղթին Նախադրութեան մէջ թէպէտ նոյն կը մնայ իմաստը, սակայն տարբերութիւնները աւելի զգալի են: Ընդհակառակն Յովհաննու Բ. թուղթը իմաստով ալ կը զանազանուի. օրինակի համար, Խմբագիր մեկնութեան մէջ՝ զրիչը կը համարի թէ Կիւրիա խորհրդանիշ մ'ըլլայ Եկեղեցւոյ, կամ ըստ այլոց՝ իրական բարեպաշտ կին մը, որ իր տունը աղօթալայրի վերածած՝ հոգեւորապէս կը կառավարէ որդիները: Կը տարբերի նոյնպէս Գ. թուղթի Նախադրութիւնը, մինչդեռ Յուդայիներ կը զուգընթանայ քիչ շատ Աստուածաշունչի. միայն մեկնութեան Նախադրութիւնը աւելի երկար է վերջաւորութեան:

1 Մանգրն. Հայկ. Թարգ. 1889, էջ 171-180:

2 Հնդ. Ամս. 1915, էջ 76:

Բարդէն Սրբազան վերոյիշեալ յօդուածին մէջ կը հետեւցնէ. «Նախադրութիւններու ուշադիր ընթերցումը յիշեցուցին՝ Սկեւռացոյն Նախադրութիւնները, եւ համեմատելով ասոնք իրարու հետ, ուշադրաւ նոյնութիւններ եւ նմանութիւններ գտայ. եւ սկսայ հարցնել ինքնիրեն թէ արդեօք Գէորգ Սկեւռացին կամ Լամբրոնացին հայերէն Աստուածաշունչի նախադրութիւնները եւ այլն գրելու ատեն չէ՞ օգտուած եւ յունարէնէ առ հասարակ»³:

Բազմալիկով արդ խմբագիր մեկնութեան յունարէն բնագրին Նախադրութեան հետ Աստուածաշունչի Յակոբ Առաքելին թուղթին Նախադրութիւնը, յար եւ նման կը գտնենք, միակ տարբերութեամբ՝ որ հայերէն մեկնութեան վերջին պարբերութիւնը «Բայց պարտ է զիտել, զի ոմանք դաւաճանեն այսր թուղթոյ» եւն. յաւելուածը, որ մեր հինգ ձեռագիրներուն նոյն Նախադրութեան կը կցուի, կը պակսի թէ՛ Աստուածաշունչի եւ թէ յունարէն խմբագիր մեկնութեան մէջ. ինչ որ Յուդայի եւ Պետրոսի Բ. թուղթին կանոնականութեան կը վերաբերի:

Գաղափար մը տալու դիտաւորութեամբ, կը հրատարակեմ ի վերջոյ, դէմ առ դէմ Աստուածաշունչի եւ խմբագիր մեկնութեան Յովհաննու Ա. Բ. եւ Գ. թուղթերուն Նախադրութիւնները, որոնք որքան նման՝ նոյնքան ալ աննման են իրենց բովանդակութեամբ եւ լեզուով: Կաթողիկէ թուղթերու թարգմանիչը ուղած է ազատօրէն հետեւիլ յոյն բնագրին, որով հեռացած է տեղ տեղ իմաստէն եւ ոճէն:

Դիտելի է որ մեկնութեան Նախադրութիւնները քիչ շատ նման Աստուածաշունչին:

Ծաղունչի Կաթողիկէ թուղթերու Նախադրութիւններուն, յունարէն մեկնութեան հրատարակութեան մէջ (Migne), Յակոբայ թուղթին սկիզբը միայն կը գտնուին, որով չենք կրնար ըսել թէ մեկնութեանս հայ թարգմանիչը միայն իր յոյն բնագրէն կախումն ունի:

Հայկական մատենագրութեամբ գրողներուն կը մնայ ճշտել Գէորգ Սկեւռացիի Աստուածաշունչի Նախադրութիւններուն եւ Յանկերուն վրայ կատարած աշխատութիւնը, որու մասին գրած է նաեւ Հ. Ալիշան⁴:

ՅԱՌԱՋԱԲԱՆ (Ձեռագիր Բ. 951)

Նախ արժան վարկանիմ գաղափար դրութեան համօրէն թխտոյն՝ ի սկիզբն գրոցս ուսանիլ. եւ Բ. թէ ընդէ՞ր թուղթքս աշտոյի կաթողիկէ կոչեցան. եւ Գ. թէ է՞ր վասն նախադասեցաւ թուղթս Յակոբայ:

Եւ է այսպիսի. քանզի յետ զլեւորոյ դրութիւն ի բարձանց առաքելոցն զՀոգին սուրբ ըստ Տեառն խոստման, այն ինչ միեկնին զանձինս ի ծով աշխարհիս, եւ մեծաւ վաստակով նեղութեամբ եւ հաւածանք զարձուցին զազգս հրէից եւ հեթանոսաց ի հաւատս աստուածապաշտութեան, զոր տեսաւ բարիտեսաց բանասիրուն ոչ կարաց հանդուրժել, այն որ ոչ կամի բնական զփրկութիւն մարդկան, այլ զկորուստն ախորժէ: Եւ զի թէպէտ խափան ոչ զաւրեաց լինել հաւատոյն յաղաղքս ուժովին զօրութեան Հոգւոյն որ ի ձեռն առաքելոցն հրաչս կատարէր: Վասն որոյ յայլ հնարս զարձոյց զհարութեան իւրոյ ներգործութիւն, յարուցանելով զհրեայս եւ զհեթանոսս անհաւատս ի վերայ հաւատացելոց, նեղել եւ չարչարել զնոսա. զի կամ վշտացեալ ի բաց կացցեն ի հաւատոցն, եւ կամ գայթակղեալ անմասն ի փառաց շնորհացն զտանիցին: Քանզի հնար է նոցա զայլթաղիլ, զայս ինչ ամէլ զմտաւ, թէ մինչ յան-

հաւատութեան էաք՝ ի յանդորրութեան եւ ի փորձամութեան կայաք, իսկ այժմ ի խոսիլութեան եւ յաղթատութեան գտանիմք. եւ այսու կարծեօք ունայն ի վարձուցն ելանէին: Զոր իմացեալ հոգւովն առաքեալքն մեծագոյն փոյթ յանձինս բերին թուղթս զրել առ հաւատացեալսն եւ հաստատել զնոսա. զիտելով հաւատարմութեան եւ ամբողջս պահել, մեծի քաջութեան եւ զօրութեան նշանակ է: Քանզի բանիւ՝ անհաւատից քարոզէին, իսկ թուղթս զրել՝ հաւատացելոցն ի հաստատութիւն փութային, յորոց մի արդարն:

Իսկ թէ ընդէ՞ր կաթողիկէ կոչեցան,

քանզի այս անուն ոչ է ըստ մեր լեզուի սովորութեան, այլ ի յունականէն յեղաշրջեալ, ընթանալան լսի, սակայն յիւրեանց բարբառն կաթողիկէն զձեւ հարսին եւ զթագուհոյ ունի. զոր յիշաւի առաքեալքն սուրբ որք փեսաւէրք էին եկեղեցւոյ՝ հոգ տարան, եւ զրեցին զսոսա առ ընթանուր հարսնացեալ եւ դէսոյ եղեալ յեկեղեցիս Քրիստոսի. քանզի ասացելովքս կազմ եւ պատրաստ գտանիցին ճշմարիտ փեսային եւ երկնաւոր արքայի Յիսուսի. վասն այսորիկ կաթողիկէք կոչեցան:

Իսկ թէ ընդէ՞ր յառաջ դասեցաւ թուղթս Յակոբայ, ոմանք ըստ գիւտի ասացին, եւ այլք ըստ պատուոյ:

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱԹ. ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Աստուածաշունչի
(ըստ Զօհրապի եւ տպ. 1860)

Քանզի եւ Յովհաննէս որ զԱւետարանն գրեաց, նաեւ զայս առաքէ թուղթ, յիշատակելով զհաւատացեալսն ի Տէր: Եւ յառաջագոյն իրրեւ յաւետարանին՝ այսպէս եւ ի թուղթս յայս աստուածաբանէ վասն բանին, ցուցանելով զնա միշտ լինել ընդ Աստուծոյ եւ ուսուցանէ զՀայր լոյս զՈյ, զի այսպէս զիտիցեմք եւ գրանն՝ լոյս փառաց ի նմանէ լինիլ: Աստուածաբանէ եւ պատմէ՝ մի՞ նոր լինել զխորհուրդս զոր առ մեզ, այլ ի սկզբանէ եւ միշտ լինել զնա եւ այժմ երեւեալ Տերամբդ, որ է կեանք յաւիտեականք եւ Աստուած ճշմարիտ. եւ զպատճառս իւրոյ զալստեանն եւ երեւման եղեալ՝ ասէ լինել զայս յաղապս առատելոյ զգործս աստանայի, եւ ազատելոյ զմեզ ի մահուանէ. զիտել մեզ զՀայր եւ զՈրդի նորա զՏէրն մեր Յիսուս Քրիստոս: Գրէ առ ամենայն հասակս, առ մանկունս, առ երիտասարդս, առ ծերս, թէ Աստուած զիտելի եղեւ. այսուհետեւ աստանայական ներգործութիւնն յաղթեալ լինի՝ խափանելով մահու: Ապա աստա-

Ա. Օր. Բ. 1462 (Էջ 246)
(Յովհաննու Ա. Բ. թուղթի)

Յովհաննէս որ զԱւետարանն գրեաց, նոյնն առաքէ թուղթ առ հաւատացեալսն Տեառն, յիշատակ աւանդացելոյ ի նոսա կանխաւ քարոզութեանն, որպէս զի շնորհիւ մկրտութեանն զաւր Բանին Աստուծոյ ընկալեալք, ոչ հեղապցին պտղաբերել զգործս առաքելութեան. եւ իրր առ կատարեալ անձինս վայելչական եւ նուրբ շաղաւք վարէ առ նոսա զընթացս գրոյս: Նախ, որպէս յԱւետարանն, աստուածաբանէ եւ աստ զմշտնջենաւորութիւն Բանին՝ սկիզբն թղթոյս վերագրեալ, որ երեւցաւ այժմ կցորդ աստուածութեան իւրոյ առնել զմարդիկ. եւ զայս շնորհաց հաղորդութիւն ունել վկայէ հաւատացելոցն ըստ հաւատոցն որ ի Տէր: Սակայն թուղթս յաւելաւ առ նոսա, զի եւ վարուք պայծառացեալք ընդ լոյսն Աստուած, մաքրութեանն լուսով անքակ միասցեն. առ այս նկատեալք թէ ըստ բնութեանս տկարութեան վերջացին, շնորհեցէ նոցա զարիւրն Քրիստոսի ի զաւրութիւն. առ այսու եւ ըստ զանազան ըն-

3 Հնդ. Ամս. 1915, էջ 73-5:

4 Սիսուան, էջ 532-3: Հմմտ. նաեւ Լոյս, 1906, էջ 1166-7 Էջմիածին ամսագիր, 1904, եր. 218 եւն.: Հմմտ. նաեւ Զօհրապեան տպագրութեան Յառաջաբան, էջ 9:

նոր ամենայն թղթով յաղագս սիրոյ ուսուցանէ, կամելով մեզ զմեզնաւ սիրելի եւ ցուցանէ թէ զմեզնաւ սիրելի բարեւոք է, վասն զի եւ Քրիստոս սիրեաց զմեզ: Պատմէ յաղագս զանազան երկրաւոր եւ սիրոյ, եւ որդւոցն Աստուծոյ եւ որդւոց սատանայի, եւ յաղագս մեզաց որ մահու չափ են, եւ որ ոչ այնպէս. եւ զանազանութիւն ուղեց՝ այնու բաժանէ, թէ ո՛ր ողի առ ի յԱստուծոյ է, եւ ո՛ր ի մոլորութիւնէ. եւ յո՛րժամ ճանաչեմք որդիս Աստուծոյ զսլ զմեզ, եւ յո՛րժամ սատանայի. եւ յաղագս ո՛ր մեզաց պարտ է մեզ աղօթս առնել ի վերայ մեզուցելոյն, եւ յաղագս որո՛յ ոչ է պատշաճ աղօթս առնել, եւ զի որ ոչ սիրէ զընկերն, ոչ է ի սուրբ կոչմանն, եւ ոչ կարացէ առել թէ Քրիստոսի է: Յուցանէ եւ զմիութիւն Որդւոյ ընդ Հօր, եւ թէ որ ուրացեալ է զՈրդի՝ եւ ոչ զՀայր ունի: Դատէ եւ ի թուղթս յայտաբերելու զիւրական նեոխնսն լինել, թէ որ առէ՝ թէ ոչ է Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, յայտնի ցուցանէ թէ սուտ է կատարեալ: Որտեղ թղթովս՝ մի՛ տրտմել հաւատացելոց ի Տէր, եւ թէ առեցին յաշխարհէ, այլ խնդալ մանաւանդ, զի առեւութիւն աշխարհիս ցուցանէ զհաւատացեալսն ելեալ յաշխարհէ, եւ եղեալ այնուհետեւ յերկնից արքայութիւնն: Եւ ի կատարումն թղթոյս՝ զարձեալ յիշատակէ առելով, թէ Որդին Աստուծոյ կեանք է յաւիտենական եւ Աստուծոյ ճշմարիտ, եւ զի պիտի ծառայեսցուք, եւ նմա սպասեցուք, եւ պահեսցուք զանձինս ի կոոյ:

ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆ
ԵՐԿՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Աստուածաշունչ
(ըստ Զօհրապեանի եւ 1860ի
տպագրութեան)

Ձայս իբրեւ զերէց զրէ տէրունոյ եկեղեցւոյն, եւ որդւոց նորին: Իսկ պատճառ թղթիս այս է. տեսանել զորդեակսն նորա զի բարեւոք շրջէին ի հաւատս, եւ բազում մոլորեցուցիչք եկեալ առէին, ոչ լինել

թաղից աշակերտելոցն մակաղրէ զմարմնական հասակաց անուն. եւ խրախոյս տայ իւրաքանչիւրոցն ի կատարումն վրութալ: Որտեղ եւ ի հերձուածողացն զլուշանալ, եւ հոգւոյն զոր ունին՝ իմաստնաւ եւ խուսել ի նոցանէ. սրտէ եւ զորդիւն սատանայի ի զործոցն. զատէ եւ զմամանակեայ նեոխնսն եղեալս, եւ ուսուցանէ թէ ամենայն որ ոչ խոստովանի զՅիսուս զսլ որդի Աստուծոյ զնոյն ինքն եւ Քրիստոս, սուտ է եւ ի հաւելն ստութեան յառաջ ածէ զայս բարբառ չարութեան: Ապա յետ այսորիկ նոյն եւ ամենայն թղթովս յաղագս սիրոյ ուսուցանէ բարեւոք զայս առնողութիւն որ յԱստուծոյ է, եւ վայելչական առելով մեզ ունել, զի եւ զմեզ Քրիստոս սիրովն վերկեաց: Աստուծոյ եւ ընդ այս պատմութիւն եւ այլ իմն կատարեալ սիրոյ նշանակ որ զերազանց երկրաւոր զտանի. եւ յորդորէ զմեզ այնպէս առ Աստուծոյ զսէրն հաստատել: Դնէ զարձեալ եւ ախոյեան ընդդէմ հերձուածողացն զմիանգամ եւ երկիցրս Հայր ի վերայ Քրիստոսի վկայութեանն՝ թէ համապատիւ Որդի նորա իցէ: Պատմէ եւ զմեզս մահու չափ եւ որ ոչն այնպէս. եւ թէ վասն որո՞յ ի նոցանէ ունիմք համարձակութիւնս առ Աստուծոյ ապագայութիւն: Միութեամբ մերձ ի կատարումն զհաւատացեալսն որք առէին յաշխարհէ որ ի չարիս կայ, եւ բարեացն ոչ կարէ լինել ընդունակ. այլ մեք զի ի կեանս յաւիտենականս առ հրաւիրեցաք, այնմ ըստ պատեցուք եւ պահեսցուք զանձինս ի կոոյ:

ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ

Մեկնութիւն խմբագիր Կարող. Թղթոց
Չեռագիր ք. 1462

Ձառաջնում թղթոյն զարբութիւն եւ զմիտս ունի եւ այս թուղթ, համառաւս եւ կարճ բանիւ ի նոյն խորհուրդն հայելով. եւ ի զէմս առնու զեկեղեցին իբրեւ զմի ի կանայց ողջախոհից, Կիւրիա նմա

զգալուստն Քրիստոսի մարմնով: Գրէ զնոցանէ ի թուղթս, եւ նախ ընդունի զորդւոց նորա ընթացս. ապա ուսուցանէ ոչ նոր լինել զոր առ մեզ խորհուրդ. պատուիրէ զարձեալ վասն սիրոյ, եւ զի կացցեն յաւանդեալ նոցա վարդապետութիւնն: Եւ յետ այսր ուսուցանէ՝ նեոն լինել զսասցողսն ոչ եկեալ մարմնով ըզՔրիստոս. պատուիրէ զայնպիսինս ոչ ընդունել ի տուն, եւ ոչ տալ նոցա ողջոյն. եւ այսպէս կատարէ զթուղթն:

ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆ
ԵՐԿՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յառաջագոյն ընդունի զԳայիոս, վրկայեալ յամենեցունց վասն օտարութեանն. եւ հրամայէ մնալ ի յառաջագրութիւնն եւ աճել, եւ յաջողել առ եղբարսն: Դարձեալ եւ զնուէրս նորա ընդունի, եւ ցուցանէ եւ զԴիոտրեփեայ, իբր թէ պատճառէ, եւ ոչ տայ աղքատաց, այլ եւ զայլսն խափանէ, եւ զբազում անգամ մարտադրեալսն ցուցանէ եւ աստ՝ թէ օտար են ի ճշմարտութեանն, եւ ոչ տեսցեն զԱստուծոյ:

Իսկ զԴիոտրեփոս ի մէջ առնու, եւ վրկայէ նմա զեղեցիկս:

անուն մակաղրեալ: Յետ այսորիկ զովէ զյառաջագրութիւնն ի բարիս, եւ թախանձէ մնալ ի նոյնն անփոփոխ: Փոքր ինչ եւ յաղագս սիրոյ յիշատակեալ, ըզգուցուցանէ եւ ի ստոցն հակառակորդաց ճշմարտութեանն որք բազմացան յաշխարհի եւ զլանան զմարդեղութիւնն Քրիստոսի. յորոց ոչ միայն խորհել, այլ մանաւանդ հրամայէ եւ ոչ ի տունս ընդունել, եւ ոչ զխաղաղութեան ողջոյն անարժանիցն չնորհել: Եւ առ սմին խոստացեալ զիւր զալուստն ի միութարութիւն նոցա՝ աւարտէ զթուղթն:

Բայց սակայն ոմանց թուեցաւ պարզապէս առ ոմն կին Կիւրիա բարեպաշտան լինել զզրեցեալս, որ աւետարանական վարդապետութեամբն խրատեալ՝ զտուն իւր եկեղեցի արար, եւ զորդեակսն ուղղէր հոգեւորապէս:

ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ

Գրէ նոյն երանելի զայս երրորդ թուղթ. սակայն Գայիոսի զրէ. որում եւ վկայէ եւ զովութեանց առնէ արժանի վասն աւտարասիրութեանն, եւ զոմանս յեղբարցն հանդուցանելոյ: Յայտ առնէ թէ զայս բարեգործ լինել յԱստուծոյ ընկալաւ շնորհ, առ որ քաջ եւ արի հրամայէ լինել. եւ մանաւանդ յորժամ աննշանից աղքատացն լինիցի, զի այսպէս յառաջագրեմ եղեալ աճեցէ ի նոյն զովելի սպասաւորութիւն:

Իսկ զԴիոտրեփայ չարափառին յիշեցուցեալ, զգուցուցանէ զաշակերտն ի վարդապետին հակառակ ախոյեանէն, որ զնոյն ձանձրացուցանէր եւ զաղքատսն տառապեցուցանէր:

Եւ զԴիոտրեփոս յառաջ բերէ զեղեցիկ վկայութեամբ եւ աւարտէ զգիրս:

Սակայն նոյն եւ այս թուղթ վասն յառաջ ասացելում պատճառին զրեցաւ զոր յերկրորդն ցուցաք:

Հ. ՔԵՐՈՐԴԻ Ա. ՉՐԱՔԵԱՆ
(Շարունակելի)